

տոս թղթով¹² կը ներկայացնէ Ուրբանոս Ը.ին Պիրոմալլիի ամբարտաւան ընթացքը եւ իւր գանգատները անոր մասին: Հաւանօրէն այս թուականէն քիչ յետոյ տեղի կ'ունենայ Պիրոմալլիի բանտարկութիւնը «ի հրամանէ Նախիջեւանի հայ արքեպիսկոպոսի»¹³ Աւգոստինոս Բաջենցի, որ կը տեւէ «22 ամիս անասելի տառապանօք»:

Իւր ազատութիւնը կը վերստանայ Պիրոմալլի «հրամանաւ Ուրբանոս Ը.ի»¹⁴ (1634, Յունիս—Յունիս):

Այս անցքերուն ծանօթ է Գրիգոր Դարանաղցի, որ այսպէս կը պատմէ եղելութիւնը (էջ 582). «Թուին ՌՁ (1631), ի ժամանակի տէր Մովսէս կաթողիկոսին . . . կուգայ ի բուն Տոանգէն ոմն յիզլիթ (!) արեղայ՝ Պօղոս անուն. նախ կու անկանի ի մէջ Չահուկացն եւ ի նոցա միջումն քամոսութիւն առնելով եւ անհաշտ խռովութիւն արկանելով եւ եպիսկոպոս նոցա զայրանալով նմա. եւ յետ առաւել հակառակելոյն ընդ եպիսկոպոսին եւ եպիսկոպոսն մատնելով զնա բռնաւորի տեղոյն եւ նա արկանելով զնա ի գուբ մահապարտաց եւ շղթայ դնելով ոտիցն՝ երեք ամ անդ կալով ի խորափախն: Եւ լոյս հոգի տէր Մովսէս կաթողիկոսն անդ պատահելով . . . բազում ջա-

¹² Անդ, p. 193:

¹³ Prop. Armenia, vol. 119, f. 110.

¹⁴ Prop. Scritturi riferiti nei Congressi Armeni dal 1430 al 1670, vol. 1.